



ԵՐԿԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԻՍ  
ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ  
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Խմբագիր՝ Ս. ՎՐԱՅԵԱՆ

Գ. ՏԱՐԻ, ԹԻԻ 1

1935

ՅՈՒՆՎԱՐ - ԱՊՐԻԼ

## ԱՆԴՐԷ ՄԱՆԴԵԼՇՏԱՄ

Հայաստանի եւ հայ դատին մատուցած մեծարժէք ծառայու-  
թիւնների համար, ինչպէս յայտնի է, այս տարւայ «Բրէժնի մրցա-  
նակը» յատկացւեց միջազգային իրաւունքի մասնագէտ եւ Մերձա-  
ւոր Արեւելքի հարցերի առաջնակարգ հեղինակներից մէկին՝ ուսս  
ծանօթ դիւանագէտ Անդրէ Մանդէլշտամին: «Բրէժնի մրցանա-  
կին» ներկայացւած նիւթը, պ. Ա. Մանդէլշտամի վերջին աշխատու-  
թիւնը, «Ռուսաստանի քաղաքականութիւնը Թիւրքիայում մեծ պա-  
տերազմի նախօրեակին», լոյս է տեսնելու Փրանսական մամուլում  
եւ միաժամանակ հեղինակի բարեհաճ հաւանութեամբ ու փափաքով  
ներկայացւում է «Վէժմ»-ի ընթերցողներին: Այս առթիւ օգտակար  
ենք համարում մի քանի տեղեկութիւններ հաղորդել մեր ընթերցող-  
ներին պ. Մանդէլշտամի կեանքի եւ գործի մասին:

Անդրէ Նիկոլայեւիչ Մանդէլշտամ ծնւել է Ռուսաստանի Մոհի-  
լեւ Դնեպրի վրա քաղաքում եւ իր մասնագիտական կրթութիւնը  
ստացել Պետերբուրգի համալսարանի իրաւաբանական եւ արեւելեան  
լեզուների բաժիններում: Աւարտելուց յետոյ, 1893 թ. թողնւում է  
համալսարանում պրոֆէսորութեան պատրաստւելու համար եւ միա-  
ժամանակ պաշտօն է ստանձնում արտաքին գործոց նախարարու-  
թեան մէջ: Քիչ յետոյ, համալսարանի կողմից ուղարկւում է Փա-  
րիզ, ուր 1893-1898 թ. թ. կատարելագործում է իր մասնագիտու-  
թիւնը՝ հետեւելով Լուի Ռէնուի, Արման Լէնէի, Ալբեր Սորէլի եւ  
Ալբեր Վանդայի դասընթացներին: 1899 թ. անցնում է դիւանագի-  
տական ասպարէզ՝ նշանակւելով Պոլսի ուսս դեսպանատան եր-  
րորդ թարգմանի պաշտօնում: 1900 թ. Պետերբուրգի համալսարա-  
նից ստանում է իրաւագիտութեան դոկտորի տիտղոս Լահէի խոր-  
հրդածողովին եւ միջազգային մասնաւոր իրաւունքին ներած երկ-  
հատոր ուսումնասիրութեան համար:

Այնուհետեւ, մինչեւ համաշխարհային պատերազմ պ. Մանդէլ-

505-2001





չտամբ մնաց Պոլսում՝ հասնելով մինչև առաջին Թարգմանի պաշտոնը: 1903 թ. նա յաջորդաբար վարեց Ուսքիւրի եւ Մոնաստիրի ռուսական հիւպատոսի պաշտոնը: Միեւնոյն ժամանակ զբաղւում է գիտական աշխատանքներով եւ 1904 թ. բնտրւեց Միջագոյին Իրաւունքի Հաստատութեան ընթերակայ: Միւս կողմից, 1905 թ. մասնակցեց Հըլի դէպքի քննութեան իբրեւ ռուսական յանձնախմբի խորհրդական: 1907-ին վարում էր Լահէի Խաղաղութեան Երկրորդ Խորհրդաժողովի ռուսական պատիրակութեան քարտուղարի պաշտոնը: 1913 թ. ռուս կառավարութեան կողմից պարտականութիւն ստացաւ կազմելու հայկական բարենորոգումների ծրագրի նախագիծը, որ հիմք ծառայեց 1914 թ. փետր. 8-ին ստորագրւած ծրագրերի: 1917 թ. Մանդէլշտամը նշանակւեց ռուս արտաքին գործոց նախարարութեան իրաւագիտական բաժնի տնօրէն եւ այդ պաշտոնում մնաց մինչև խորհրդայնացում, որից յետոյ անցաւ Փարիզ, ուր եւ ապրում է մինչև այսօր:

Տարագրութիւնից առաջ ու յետոյ էլ, պ. Մանդէլշտամը վարեց եւ ուրիշ կարեւոր պաշտոններ ու յանձնարարութիւններ: Վերջին 15 տարւայ ընթացքում էլ, հակառակ տարագրութեան աննպաստ պայմանների, նրա գործունէութիւնը եղաւ բազմակողմանի եւ բովանդակալից: 1921 թ. սկսած նա անդամ է Միջագոյին Իրաւունքի Հաստատութեան եւ 1927-ից սկսած՝ Միջագոյին Դիւանագիտական Ճեմարանի: Տարբեր ժամանակներում եղել է Լիւստանական կառավարութեան իրաւական խորհրդական: Փարիզի Միջագոյին Բարձր Դիտութեան Հաստատութեան մէջ, 1921-ին, տւել է 12 դասախօսութիւն Թիւրքիայի եւ նրանից անջատւած երկրների միջագոյին կացութեան մասին: Լահէի Միջագոյին Իրաւունքի Հաստատութեան մէջ, 1923-34 թ. ընթացքում կարգացել է 22 դասախօսութիւն փոքրամասնութեանց հովանաւորութեան, մարդկային իրաւունքի միջագոյին պաշտպանութեան, ռուսական քաղաքականութեան եւ այլ հարցերի մասին: Դասախօսութիւններ է կարդացել նաեւ Ժրնեւի եւ Բերլինի Իրաւագիտական Բարձրագոյն Կաճառներում՝ նիւթ ունենալով միշտ միջագոյին-իրաւագիտական խնդիրներ կամ Մերձաւոր Արեւելքի քաղաքական հարցեր:

Բացի այդ, Ա. Մանդէլշտամը ունի բազմաթիւ գիտական աշխատութիւններ, որոնք հրատարակւած են առանձին հատորներով կամ ցանցնւած են ռուսերէն եւ օտար սարբերականների մէջ: Յիշենք այստեղ յատկապէս նրա «Le sort de l'Empire Ottoman» հոյակապ հատորը, որ իր տեսակի մէջ բացառիկ կարեւորութիւն ունեցող աշխատութիւն է: Նրա մի ուրիշ գրւածքը Երիտասարդ



Թիւրքերի մասին, որ լոյս տեսաւ Օսմ. Սահմանադրութիւնից անմիջապէս յետոյ եւ իթթիհատականութեան լաւագոյն բնորոշումներէից մէկն է, թարգմանուած է նաեւ հայերէն:

Մեզ համար առանձնապէս թանգագին է այն գործը, որ պ. Մանդէլշտամը կատարել է եւ շարունակում է կատարել Հայաստանի եւ հայկական հարցի ուսումնասիրութեան եւ գործնական քաղաքականութեան բնագաւառում: Ինչպէս ասացինք, 1913-ին, ուսուկաւարութեան յանձնարարութեամբ նա մշակեց հայկական բաւերնորոգումների նախագիծը: Պ. Մանդէլշտամի դերը հայկական բաւերնորոգումների հարցում հանգամանորէն ներկայացւած է «Վէմ»-ում Վ. Փափաղեանի յօդուածաշարքով եւ արդէն ծանօթ է ընթերցողներին: Այնուհետեւ, մանաւանդ, տարադրութիւնից յետոյ, արտասահմանում պ. Մանդէլշտամ անխորտի մինչեւ այսօր մնում է հաւատարիմ բարեկամը հայերի եւ անդուլ աշխատողը հայկական զատի իրաւական պաշտպանութեան համար: Իր իրաւագիտական խորհուրդներով Հ. Հ. Պատւիրակութեան, իր դասախօսութիւններով ու բաղմապիտի հրատարակութիւններով, իր իրաւական-մասնադիտական կողմ հիմնաւորումներով, իր աշխատանքներով հայանդպաստ մարմինների մէջ, պ. Մանդէլշտամ անգնահատելի ծառայութիւն է մատուցանում Հայաստանին ու հայ ժողովրդին, եւ միանգամայն բնական է եւ արդար, որ «Բրէմոնի մրցանակը» նրան է յատկացւած:

Մասնաւորապէս արժէքաւոր են պ. Մանդէլշտամի Հայաստանին ու հայկական հարցին ներած ուսումնասիրութիւնները: Յատկապէս նրա «La Société des Nations et les Puissances devant le Problème Arménien» նիւթը սպառող եւ բացառիկ հմտութեամբ ու բարեխըղճութեամբ կաղմած հատորը, որ այսօր սեղանի դիրք է հայկական հարցով զբաղւող ամէն մի գործչի համար:

Պ. Մանդէլշտամը լուսամիտ ու հմուտ գիտնական է եւ միաժամանակ լայնախոհ ու հայրենասէր ուսու մարդ: Նա կարողանում է հաշտեցնել իր հայրենիքի եւ ուրիշ ժողովուրդների շահերը դաւուս մշակած յառաջիկայ դադափարներին: Յատկապէս Հայաստանի ու հայկական հարցի բնագաւառում նա արտակարգ յատկատեսութեամբ ընդնշմարում է այն ուղիները, որոնք անհրաժեշտ են հայ ժողովրդի ազգային-քաղաքական ինքնուրոյն զարգացման համար, բայց եւ համապատասխան են իր հայրենիքի ձգտումներին ու շահերին: Այս տեսակէտից նա բացառիկ դիրք է գրաւում ուսու դիւանագէտների շարքում: Եւ իր այդ դիրքի համար վայելում է անխըտիր բոլոր հայերի յարգանքը: